

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Սույն թվականի նոյեմբերի 27-ին ժամը 12:00 Գորայք խոշորացված համայնքում տեղի կունենա հանրային քննարկում՝ կազմակերպված Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից:

Հանրային քննարկումը ներառում է Գորայք համայնքում Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի Բաղադրիչ 2-ի շրջանակներում իրականացվող «Գյուղատնտեսական տեխնիկայի կայանման համար ավտոկայանատեղիի կառուցում» ծրագրի վերաբերյալ Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի ներկայացում և քննարկում: